



յուրաքանչյուր երեխայի համար

# Հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքները ՔՈՎԻԴ-19 համավարակի համատեքստում



Ապրիլ, 2020թ.

# Արձագանք կորոնավիրուսային վարակին (ՔՈՎԻԴ-19). Փաստեր որոնք պետք է հաշվի առնել հաշմանդամություն ունեցող երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ համավարակի համատեքստում

## Ի՞նչ է պետք իմանալ

Հայտնի է, որ առողջության վատթարացումը անհամաչափ ազդեցություն է ունենում անբարենպաստ սոցիալական պայմաններում ապրող անձանց վրա:<sup>1</sup> ՔՈՎԻԴ-19 համավարակի համատեքստում հաշմանդամություն ունեցող անձինք կարող են վարակվելու, բարդությունների առաջացման և մահվան բարձր ռիսկի խմբում հայտնվել, քանի որ.

- Հաշմանդամություն ունեցող անձինք անհամաչափորեն են ներկայացված տարեցների շրջանում, որոնք ինչպես հայտնի է գտնվում են ՔՈՎԻԴ-19 վարակի բարձր ռիսկի խմբում: Հայտնի է, որ 60-ից բարձր տարիք ունեցող աշխարհի բնակիչների ավելի քան 46%-ը ունի հաշմանդամության կարգավիճակ:<sup>2</sup>
- Հաշմանդամություն ունեցող երեխաները և չափահասները կարող են ունենալ առողջական խնդիրներ, որոնք մեծացնում են ՔՈՎԻԴ-19-ի վարակման ռիսկը և լուրջ բարդությունների զարգացման ռիսկը:
- Հաշմանդամություն ունեցող անձինք անհամաչափորեն են ներկայացված աղքատ բնակչության խմբում<sup>3</sup>: Հայտնի է, որ ՔՈՎԻԴ-19-ի ազդեցությունը առավել ծանր հետևանքներ կունենա ցածր սոցիալ-տնտեսական պայմաններում ապրող անձանց վրա:<sup>4</sup>

Այնուամենայնիվ, չնայած բարձր ռիսկի, հաշմանդամություն ունեցող տղամարդիկ, կանայք, տղաները և աղջիկները նույնպես բխվում են կանխարգելման և արձագանքման միջոցառումների հասանելիության խոչընդոտներից.

- Տարբերակված տվյալների սահմանափակ առկայությունը թույլ չի տալիս գնահատել համաճարակի ազդեցությունը հաշմանդամություն ունեցող անձանց վրա:
- Տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության բացակայությունը նշանակում է, որ լսողության, տեսողության հետ կապված, մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձինք կարող են չստանալ կանխարգելման և խնամքի վերաբերյալ հիմնական տեղեկությունները:

<sup>1</sup> <https://www.who.int/news-room/fact-sheets/detail/human-rights-and-health>

<sup>2</sup> <https://www.un.org/development/desa/disabilities/disability-and-ageing.html>

<sup>3</sup> <https://social.un.org/publications/UN-Flagship-Report-Disability-Final.pdf>

<sup>4</sup> <https://www.weforum.org/agenda/2020/03/coronavirus-pandemic-inequality-among-workers/>

- Հաշմանդամություն ունեցող անձինք շրջապատի խոչընդոտների պատճառով բախվում են հիմնական առողջապահական ծառայությունների սահմանափակ հասանելիության հետ, այդ խոչընդոտների շարքին են դասվում՝ հանրային տրանսպորտի մատչելիության խնդիրները, հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և աշխատելու բուժաշխատողների սահմանափակ հմտությունները, և բժշկական օգնության և սպասարկման դիմաց բարձր ծախսերը, որոնք որոշ դեպքերում սրվում են ապահովագրության առավել սահմանափակ հասանելիության պատճառով:
- Հաշմանդամություն ունեցող աղջիկները և տղաները կարող են կրթությունից դուրս մնալու ռիսկի խմբում հայտնվել, եթե հեռավար ուսուցման ծրագրերը մատչելի չեն կամ բացակայում են աջակցող տեխնոլոգիաները, որոնք թույլ են տալիս մասնակցել ուսման գործընթացին և բավարարել կրթական կարիքները:
- Համայնքային, սոցիալական, և տնային պայմաններում տրամադրվող ծառայությունների և աջակցության խաթարումը, ներառյալ անհատական օգնությունը, կարող են անհամաչափորեն ազդել հաշմանդամություն ունեցող անձանց վրա:
- Կարանտինային միջոցառումները, բժշկական հաստատությունները և տրանսպորտային միջոցները, որոնք կիրառվում են ՔՈՎԻԴ-19 համաճարակի արձագանքման մեխանիզմներում, կարող են չհամապատասխանել հաշմանդամություն ունեցող երեխաների/չափահասների պահանջներին, ներառյալ մատչելիությունը:
- Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ նախապաշարմունքների, խարանի և խտրականության առկայությունը բացասական ազդեցություն են ունենում, օր. սխալ պատկերացումներն այն մասին, որ հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող մասնակցել հիվանդության բնական արձագանքին կամ կայացնել իրենց սեփական որոշումները:
- Արտակարգ իրավիճակներում ռեսուրսներ հատկացնելիս և առաջնահերթությունները սահմանելիս կարող են հաշվի չառնվել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները:

## Ի՞նչ է պետք անել

Արձագանքման յուրաքանչյուր փուլում համագործակցել հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահասների հետ աշխատող տեղական կազմակերպությունների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց հայտնաբերելուց և իրենց համար հիմնական տեղեկատվական հաղորդագրություններ մշակելուց մինչև վարակի բնական արձագանքման խմբերում հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկվելու կարողությունների հզորացումը:

## Մասնանափակել վիրուսի փոխանցումը և պաշտպանել մարդկանց վիրուսի ազդեցությունից

- ՔՈՎԻԴ-19-ի կանխարգելման և մատչելի օգնության մասին հաղորդագրությունները կարող են չհասնել տեսողության, լսողության հետ կապված կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, եթե այն չի տրամադրվում բազմակի և մատչելի ձևաչափերով: Մասնավորապես, սա նշանակում է, որ բոլոր հաղորդագրությունները պետք է հասանելի լինեն.
  - Բրայլով և մեծ տպագիր տառերով՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար;
  - Պարզեցված ձևաչափով՝ մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար;
  - Գրավոր կամ տեսանյութի տեսքով, սուբտիտրերի և (կամ) ժեստերի լեզվի ուղեկցությամբ՝ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար;
  - Մատչելի էլեկտրոնային տարբերակով այն անձանց համար, ովքեր օգտագործում են աջակցող տեխնոլոգիաներ, օր. էկրանի ընթերցման ծրագիրը:
- Վերանայել այն տեղեկատվական ալիքները, որոնք հասանելի են հաշմանդամություն ունեցող անձանց համար: Օր. դպրոցների միջոցով անցկացվող ցանկացած տեղեկատվական արշավ կարող է հասանելի չլինել հաշմանդամություն ունեցող երեխաների համար, բացի այդ հաշմանդամություն ունեցող երեխաները կարող են սոցիալական ցանցերի և տեխնոլոգիական այլ հարթակների ավելի ցածր հասանելիություն ունենալ:
- Աջակցել, որ շուրջօրյա խնամքի և այլ գիշերօթիկ հաստատություններում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաներին և չափահասներին հասանելի լինեն կանխարգելման և արձագանքման համապատասխան միջոցները:

## Նվազեցնել հիվանդացությունը և մահացությունը

- Հայտնաբերել և նվազեցնել այն խոչընդոտները, որոնք կանխում են անվտանգ մուտքը դեպի բժշկական ծառայություններ, ներառյալ.
  - ապահովել տրանսպորտի և առողջապահական հաստատությունների ֆիզիկական մատչելիությունը<sup>5</sup>,
  - համագործակցել համայնքի և հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ՝ լուծելու այն սոցիալական նորմերը, որոնք հանգեցնում

<sup>5</sup> [Accessible Components for the Built Environment: Technical Guidelines embracing Universal Design](http://www.unicefemergencies.com/downloads/eresource/docs/Disability/annex12%20technical%20cards%20for%20accessible%20construction.pdf)  
<http://www.unicefemergencies.com/downloads/eresource/docs/Disability/annex12%20technical%20cards%20for%20accessible%20construction.pdf>

են բժշկական օգնություն ստանալու հարցում հաշմանդամություն ունեցող անձանց առաջնահերթության նվազեցմանը,

- ապահովել, որ առողջապահական և երեխաների պաշտպանության ոլորտի աշխատակիցները վերապատրաստվեն և տիրապետեն մատչելի հաղորդակցման հմտությունների և (կամ) հաղորդակցմանն օժանդակելու նպատակով կարողանան օգտվել ժեստերի լեզվի թարգմանչի ծառայություններից և այլ ռեսուրսներից:
- Ապահովել դպրոցներում, մանկապարտեզներում և հանրային այլ վայրերում, ներառյալ բժշկական հաստատություններում, սանիտարահիգիենիկ և լվացվելու համար նախատեսված միջոցների առկայությունը:
- Ռեսուրսների սահմանափակ առկայության պարագայում, իրավիճակի կայունացման և բուժման վերաբերյալ որոշումները կարող են բացասաբար ազդել հաշմանդամություն ունեցող անձանց վրա: Անհրաժեշտ է աշխատել առողջապահության տեղական ներկայացուցիչների հետ, որպեսզի նման որոշումներ կայացնելիս նրանք առաջնորդվեն մարդու իրավունքներով և բացառեն հաշմանդամությամբ պայմանավորված խտրականությունը:
- Բացահայտել հաշմանդամություն ունեցող այն մեծահասակներին և երեխաներին, ովքեր կարող են հասցեական աջակցության և տեղեկատվության կարիք ունենալ:

## Կանխել և նվազագույնի հասցնել հիվանդության բռնկման երկրորդային հետևանքները

- Հաշմանդամություն ունեցող անձանց շարունակական աջակցություն ցուցաբերելու նպատակով մշտադիտարկել և ապահովել համապատասխան ծրագրերի առկայությունը, եթե հոսպիտալացման, կարանտինի կամ սոցիալական ինքնամեկուսացման հետևանքով խնամակալները և ծառայություններ մատուցողները չեն կարող տնային այցեր իրականացնել:
- Երբ խորհուրդ է տրվում սոցիալական մեկուսացումը, առավել տուժածների խմբում հայտնվում են այն անձինք, ովքեր արդեն իսկ գտնվում են ավելի մեկուսացված վիճակում: Ապահովել, որ հոգեկան առողջության և հոգեբանա-սոցիալական աջակցության մեխանիզմները հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար, ներառյալ շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաներին և չափահասներին: Օր. «առաջնագծի» մասնագետներին աջակցել ՔՈՎԻԴ-19-ի վերաբերյալ գիտելիքներով, հոգեկան առողջության և հոգեբանա-սոցիալական աջակցության հմտություններով<sup>6</sup>, թե ինչպես ուղղորդել այն անձանց, որոնց կարող է ավելի

<sup>6</sup><https://www.who.int/docs/default-source/coronaviruse/mental-health-considerations.pdf>,

<https://resourcecentre.savethechildren.net/document-collections/save-children-psychological-first-aid-training>

մասնագիտացված աջակցություն պահանջվել: Միաժամանակ ապահովել, որ բավարար անձնակազմ տիրապետի հաշմանդամություն ունեցող երեխաներին և չափահասներին հոգեկան առողջության և հոգեբանա-սոցիալական աջակցություն տրամադրելու գիտելիքներով և հմտություններով:

- Աջակցել կրթական հաստատություններին՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար հեռավար ուսուցման հարթակների անվտանգությունն ու մատչելիությունը ապահովելու նպատակով; աջակցել ուսուցիչների վերապատրաստմանը հաշմանդամություն ունեցող երեխաներին հեռավար աջակցություն տրամադրելու նպատակով, և ապահովել, որ հատուկ կրթական ծրագրերը ներառված լինեն կրթության շարունակականության ապահովմանն ուղղված միջոցառումներում: Աջակցել հաշմանդամություն, այդ թվում զարգացման և (կամ) մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների, խնամակալներին՝ կիրառել հատուկ մոտեցումներ տնային պայմաններում իրենց երեխաների խնամքը և կրթությունը, ինչպես նաև իրենց սեփական հոգեկան առողջությունը և հոգեսոցիալական բարեկեցությունը ապահովելու նպատակով:
- Ռեսուրսների վերաբաշխման համատեքստում պահպանել և աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից օգտագործվող բժշկական և սոցիալական ծառայությունների մատչելիությանը և շարունակականությանը, ներառյալ վերականգնողական ծառայությունները, աջակցող տեխնոլոգիաները և անձնական աջակցությունը:
- Ապահովել տեղեկատվական հաղորդագրությունների հարգալից և անաչառ ձևաչափը, խուսափել բնակչության ցանկացած խմբի նկատմամբ տարիքով կամ հաշմանդամությամբ պայմանավորված հնարավոր խարաններից (օր. տարեց և հիվանդություններով տառապող անձանց բարձր ռիսկայնության վերաբերյալ հաղորդագրությունների միջոցով անզգուշորեն ասոցիացնել #ՈՎԻԴ-19-ի փոխանցման աճը հաշմանդամություն ունեցող անձանց հետ):
- Ինչպես կանանց և աղջիկների մեծամասնությունը, հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները բխվում են հիմնական ծառայությունների անհասանելիության և սահմանափակ տեղաշարժման հետ, առաջնային պատասխանատվություն են կրում իրենց ընտանիքների խնամքը ապահովելու գործում, և գտնվում են գենդերային բռնության բարձր ռիսկի խմբում:<sup>7</sup> Ապահովել, որ գենդերային բռնության կանխարգելման և արձագանքման ցանկացած ծրագիր ներառի հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին (օր. ապահովել տեղեկատվական ալիքների հասանելիությունը բազմակի և հարմարեցված ձևաչափերով):
- Նպաստել ապացույցների բազայի ընդլայնմանը, ուսումնասիրելով թե ինչպես է համաճարակը և արձագանքման միջոցառումները ազդում բնակչության խմբերի վրա՝

<sup>7</sup> <https://www.sixthtone.com/news/1005253/domestic-violence-cases-surge-during-covid-19-epidemic>

կախված սեռից, տարիքից, հաշմանդամությունից, հիմնական բժշկական պայմաններից և այլ գործոններից:

## Նվազեցնել ռիսկերը, հզորացնել ներքին պատրաստվածությունը և համակարգումը

- Կանխարգելման և արձագանքման ծրագրերի մշակման և իրականացման գործում համագործակցել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ:
- Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների մասնակցությանը տեղական և ազգային համակարգման մեխանիզմներում:
- Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ մշտադիտարկման և համաճարակաբանական հսկողության տվյալների մանրամասն վերլուծությանը:

ՔՈՎԻԴ-19-ի բռնկման արձագանքման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը պետք է լինի գիտակցված և հասցեական: Եթե ի սկզբանե հաշմանդամություն ունեցող անձինք ներառված չեն պլանավորման գործընթացում, ներառյալ բյուջեի կազմումը և ռեսուրսների բաշխումը, ապա վտանգ կա, որ հաշմանդամություն ունեցող անձինք, չնայած հիվանդացության բարձր ռիսկայնության, դուրս կմնան կանխարգելման և արձագանքմանն ուղղված միջոցառումներից:

### ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ

Պետրոս Ադամյանի 14, Երևան

+37410580174

[yerevan@unicef.org](mailto:yerevan@unicef.org)

[www.unicef.am](http://www.unicef.am)

[www.babycef.am](http://www.babycef.am)

ՔՈՎԻԴ-19-ի մասին լրացուցիչ մասնագիտական տեղեկատվության համար այցելե՛ք [կորոնավիրուսի վերաբերյալ թարմացվող լրահոսի կայքէջ](#):